Արձանագրություն 4

ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-19/5 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ծառայությունների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 18.04.2019թ.
ժ.12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Մնացականյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամ՝ Թ. Զալինյան /գնահատող/
Վ. Ղանդիլյան /գնահատող/
Ա. Գևորգյան /գնահատող/
Ա. Խաչատրյան /բացող/
Ա. Ադամյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մարգարյան

1. Գնահատման արդյունքների մասին

(Կ. Մնացականյան)

1.1 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից սահմանված ժամկետում ստացվել է համապատասխան եզրակացությունը, համաձայն որի <<Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան>> հիմնադրամը բավարարում է «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի սահմանված պահանջներին, սակայն առկա է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ /09.04.2019թ/ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

1.2 <<Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան>> հիմնադրամի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են հրավերով պահանջվող որակավորումը հիմնավորող փաստաթղթերը: Միաժամանակ <<Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան>> հիմնադրամի կողմից ներկայացվել է քաղվածք հարկ վճարողի անձնական հաշվի քարտից, համաձայն որի <<Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան>> հիմնադրամը 10.04.2019թ-ի դրությամբ ունի սահմանված չափից ավել վճարած գումարներ:

1.3 Հիմք ընդունելով հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները <<Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան>> հիմնադրամի հայտը գնահատել անբավարար և մերժել վերջինիս հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 6, դեմ 0:

2. Գնման գործընթացը չկայացած հայտարարելու մասին

(Կ. Մնացականյան)

2.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1.3 կետը և <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետը՝ գնման գործընթացը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ 6, դեմ 0:

2.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 45-րդ կետը՝ <<Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան>> հիմնադրամի տվյալները, ներառյալ համապատասխան հիմքերը, ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, հաշվի առնելով, որ առկա են <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի և 6-րդ ենթակետի ա/ մասով նախատեսված հիմքերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 6, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Կ. Մնացականյան /նախագահ/

---------- Թ. Զալինյան

---------- Վ. Ղանդիլյան

---------- Ա. Գևորգյան

---------- Ա. Խաչատրյան

---------- Ա. Ադամյան

---------- Ա. Մարգարյան /քարտուղար/